« 05 » հունվարի 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ին (Ռուսաստանի Դաշնություն, Ռոստովի մարզ, ք. Դոնի Ռոստով - 301090, Գեոլոգիչեսկայա փ. 2, բն./օֆ. 407, 344065, ՀՎՀՀ 6166123520) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի կարիքների համար քիմիական սեղանի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ն, ինչի արդյունքում կողմերի միջև 25.07.2023թ կնքվել է «ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ-23/50» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ն) պարտավորվում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված քիմիական սեղանը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ն Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել ապրանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7օրից ավելի:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Այսպիսով, Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը: Նշված հանգամանքը համարվում է գնման գործընթացի շրջանակում

Ընկերության կողմից ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ՏՆ-ԼԻԴԵՐ» ՍՊԸ -ին ներառել նշված ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 27.12.2023թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հարգանքով՝

ՀՀ ԳԱԱ ՖՀԻ տնօրեն **Ա. Պապոյան**